

**ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՈՌՂԱՑԵՆՆ ՔԱՐԻՄԶԱԴԵՆ ՆԱՂՇԻՆԵՆ**

**«ՇԱՀՆԱՄԵ»-Ի ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

**Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**ՄԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2017**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Լ. Վ. Ղազարյան

**Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝**

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

բանասիրական գիտությունների թեկնածու  
Ալի Դեհղան

**Առաջատար  
կազմակերպություն՝**

Թեհրանի Հասարակագիտության և  
մշակութային ուսումնասիրությունների  
ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2018թ. հունիսի 18-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. մայիսի 18 - ին:

**Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ**

**Ն. Մ. Միմոնյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աբուլղասիմ Ֆիրդուսիի և նրա մշակած իրանական «Շահնամե» (Մատեան թագավորաց) էպոսը հնագույն ժամանակներից մինչև VII դարն ընկած ժամանակաշրջանի Իրանի առասպելախառն պատմության չափածո ամբարգրումն է: Դա Իրան–Թուրան երկարամյա կռվի, լույսի ու խավարի, բարու և չարի տևական հակամարտության պատմությունն է, որն ավարտվում է լույսի, ճշմարտության և բարու հաղթանակով:

«Շահնամե» բաղկացած է նախերգանքից և երեք անհավասար մասերից: Նախերգանքում իրար են հաջորդում աշխարհարարման ու մարդարարման մոտիվները, Աստծո, իմաստության, սուլթանի ու տարբեր կառավարիչների գովաբանությունները, ինչպես նաև աստվածային շնորհով (Ֆառո, հայ.՝ փառք) օժտված տիրակալի առանձնահատկություններն ու արդարությունը, այնուհետև դյուցազնական և պատմական մասերն են:

«Շահնամե» դասական կամ պալատական (դարի), իսկ ավելի ստույգ՝ վաղ նոր պարսկերենով գրված ամենաձավալուն երկն է: Էպոսն ունի մինչև 60000 բեյթ, և Աբուլղասիմ Ֆիրդուսին այն ավարտին է հասցրել 1033 թ.:

Վաղ նոր պարսկերենը, որն ընդունված է անվանել նաև դասական պարսկերեն, ձևավորվել է Ֆարսում խոսվող լեզվի հիման վրա, գոյատևել է մինչև 15-րդ դարը, որը վաղ իսլամական դարաշրջանում տարածվել է դեպի հյուսիս ու արևելք և գրական լեզվի կարգավիճակ ստացել Սամանյան արքունիքի ստեղծագործողների կողմից: Այն դառնում է ամենատարածված լեզուն իրանական լեզուների մեջ և սփռվում է Խուզիստանից Ֆարդանա, մինչև Հնդկաստանի խորքերը: Բոլոր տարածքներում պարսկերենը գերիշխող է դառնում տեղական լեզուների ու բարբառների նկատմամբ: Այդ «գաղթի» ընթացքում այս լեզուն փոխառություններ է կատարում հյուսիսում ու արևելքում խոսվող իրանական լեզուներից, և դրանով է բացատրվում պարսկերենում առկա փոխառությունները սողդերենից և հյուսիս-արևմտյան բարբառներից:

«Շահնամե»-ի լեզուն պարզ է և մաքուր՝ չափավոր հնաբանություններով, հնարավոր սահմանափակ արաբաբանություններով: Ֆիրդուսին ստեղծել է հոմանիշներով, հասկանիչ ցույց տվող բառերով հարուստ լեզվական մի գանձարան, որն ամփոփում է պարսկերենի հնագույն հարուստ ժառանգությունն ու հիմք դառնում լեզվի հետագա զարգացման համար: Ամփոփելով լեզվի պատմական անցյալը, ներառելով իրանական մյուս լեզուների բառապաշարային միավորները՝ էպոսը լեզվական առումով ներկայանում է որպես պարսկերենի կատարյալ շտեմարան, որն ասես պահում է պարսկերենի գանձարանն անձեռմխելի վիճակում:

Պոեմը գրված է *մոթաղարեբ* չափով, որը նույնպես նպաստել է լեզվի ճկուն կիրարկման համար: Այս չափը (տողերը 11 վանկանի են, և յուրաքանչյուր բեյթ՝ մեկ ամբողջություն) ենթադրում է յուրաքանչյուր երկտողի համար մի ամբողջական միտք:

Սույն ուսումնասիրությունը առաջին փորձն է՝ համապարփակ կերպով քննելու իրանական էպոսի բառապաշարային խնդիրները: Ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվում ներկայացնելու նոր պարսկերենի (IX – XV դդ.) բնիկ բառապաշարի ներկայացվածությունը համաիրանական չափածո այս ստեղծագործությունում, վերհանելու բառային այն առանձին միավորները, որոնք ժամանակակից պարսկերենի գործուն բառապաշար չեն մտել, համակարգելու բարբառային տեսակետից ոչ պարսկական միավորները, որոնք նաև էպոսի միջոցով են ամրագրվել ժամանակակից պարսկերենում: Հաշվի առնելով «Շահնամե»-ի տրամադրած լեզվական նյութի ծավալները՝ նշենք, որ դա միայն մեկ ատենախոսության սահմաններում ներառել հնարավոր չէ, և ներկա աշխատանքն այն ատաղձն է, որի հիման վրա պետք է կառուցվեն էպոսի լեզվական առանձնահատկություններին նվիրված հետագա ուսումնասիրությունները: «Շահնամե»-ի տեքստի բառաշերտերը ենթարկվել են իմաստային, ծագումնաբանական ու մասամբ՝ բառակազմական հետազոտության:

### **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

«Շահնամե» քննության է ենթարկվել գրականագիտական, պատմական, ազգագրական, մշակութաբանական, մասամբ նաև, լեզվական տեսանկյուններից: Սույն ուսումնասիրությունն առաջին փորձն է՝ քննելու լեզվական տեսակետից հսկայածավալ, հարուստ նյութ պարունակող այս տեքստի բառապաշարային խնդիրներն առավել համապարփակ ձևով:

«Շահնամե»-ի բառապաշարի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա ստեղծման և նոր պարսկերենի ձևավորման ժամանակաշրջանները գրեթե համընկնում են, և էպոսը լեզվանյութ է տրամադրում պարսկերենի վաղ շրջանի լեզվավիճակի մասին: Թեմայի արդիականության համար կարևոր նշանակություն ունի նաև իրանական լեզուների՝ միմյանց հետ ունեցած պատմական շփումների վերհանման հրատապությունը, որը չափազանց կարևոր է արդի փուլում պարսկերենի բառապաշարի զարգացման ամբողջական պատկերի վերականգնման տեսանկյունից:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ատենախոսության նպատակն է պատմահամեմատական քննության ենթարկել «Շահնամե»-ի բառապաշարը: Հետազոտությունն իրականացնելիս դրվել են հետևյալ խնդիրները.

ա) ճշգրտել պարսկերենի բնիկ բառապաշարի տարրերն էպոսում,

բ) պարզել նոր պարսկերենի լեզվական բնութագիրը «Շահնամե»-ի ձևավորման շրջանում,

գ) տարժամանակյա քննության միջոցով ներկայացնել «Շահնամե»-ի բառապաշարային շերտերը՝ ըստ բառային ու հնչյունական հստակ տարբերակիչների,

դ) տարրորշել հնավանդ բառերի այն խումբը, որոնք այժմ ունեն կամ միայն գրքային կիրառություն, կամ պահպանվել են միայն բառարաններում ու սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող երկերում,

ե) վեր հանել լեզվական շերտերը՝ հյուսիս-արևմտաիրանական, արևելաիրանական, արաբական, որոնք հետագայում ամրագրվեցին պարսկերենում,

զ) պարզել հայերենի նոր իրանական փոխառությունների այն շերտը, որը տեղ է գտել էպոսում:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՑԹԸ**

«Շահնամեն» ունի ուսումնասիրման հարուստ ավանդույթ, և նրա ուսումնասիրությունը գտնվում է նույնիսկ պետական հոգածության ներքո: Ուսումնասիրման պատմության ողջ ընթացքը հազեցած է տարաբնույթ հետազոտություններով, որոնք ունեն տարբեր ուղղվածություն: Սակայն «Շահնամե»-ի բառապաշարի համապարփակ քննություն, որը թույլ կտար ուրվագծել պարսկերենի բառապաշարի ներկայացվածությունը էպոսում, չի կատարվել: Այս ատենախոսության գիտական նորույթը պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ պարսկերենի բնիկ բառապաշարի քննությունն է՝ էպոսի լեզվանյութի շրջանակներում: Այդ քննության ընթացքում լուսաբանվել են էպոսում գործածված բառերի իմաստային փոփոխությունները պարսկերենի զարգացման ընթացքում, որոշարկվել են լեզվի զարգացման փուլերում էպոսում վկայված բառամիավորների ծագումնաբանական շերտերը, առաջին անգամ համակարգված կերպով ներկայացվել են «Շահնամե»-ի բառապաշարի ոչ պարսկերեն, մասնավորապես արևելաիրանական և հյուսիս-արևմտյան, արաբերեն շերտերը, դրանք ենթարկվել են տարժամանակյա քննության: Ատենախոսության միջոցով փորձ է արվել տալ «Շահնամե»-ի և վաղ նոր պարսկերենի լեզվական բնութագիրը:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթները կարող են նպաստել իրանական լեզուների պատմական կապերի լուսաբանմանը, միջին պարսկերենից վաղ դասական պարսկերենի անցման շրջանն ու պարսկերենի առաջխաղացման հարցերի ճշգրտմանը, նաև պարսկերենի և մյուս իրանական լեզուների, մասնավորապես հյուսիսարևմտյան ու արևելյան արեալային շփումների համատեքստում դրանց փոխհարաբերությունների և դրանց

արդյունքում առաջ եկած ազդեցությունների և բառային ընդհանրությունների ուսումնասիրմանը:

Գործնական նշանակության առումով՝ «Շահնամե»-ի բառապաշարի պատմահամեմատական ուսումնասիրությունը կարող է նպաստել պարսկերենի բառամթերքի՝ զարգացման ընթացքում բառերի իմաստային փոփոխությունների բացահայտմանը և թարգմանչական աշխատանքներում դրանց հաջող կիրարկմանը: Թեմայի ուսումնասիրության ժամանակ հայտնաբերվել և աշխատանքում զետեղվել են էպոսում վկայված բազմաթիվ հնավանդ ձևեր, որոնց ներմուծումը իրանագիտության ոլորտ կարող է նպաստել պարսկերենում նորաբանությունների ստեղծման գործընթացում ռելևանտ նյութի գործածմանը:

Բացի այդ՝ աշխատանքում ստուգաբանված մի շարք բառեր կարող են օգտագործվել իրանական լեզուների ստուգաբանական բառարանների կազմության ժամանակ:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Ատենախոսությունում կիրառված ելակետային հետազոտական մեթոդը պատմահամեմատական է, որի միջոցով ներկայացվել է էպոսի բառապաշարից առանձնացված միավորների ծագման ու զարգացման պատմությունը: Այդ գործընթացում պարզվել են նաև այդ բառամիավորների հարաբերությունները իրանական մյուս լեզուների բառանյութի հետ:

Ատենախոսության մեջ օգտագործվել է նաև նկարագրական մեթոդը՝ ներկայացնելու համար լեզվի վիճակը զարգացման տվյալ փուլում, այսինքն՝ նոր պարսկերենի վաղ փուլում:

Մասամբ գործածված կառուցվածքային և իմաստաբանական մեթոդներով կատարվել է առանձնացված բառապաշարի բառակազմական և իմաստային քննություն:

### **ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ**

Ժամանակագրական առումով ատենախոսության նյութի համար մեկնակետ է «Շահնամե»-ի գրության շրջանը՝ XI դարը, երբ նոր պարսկերենը սկզբնավորման ու զարգացման առաջին փուլում էր: Բառապաշարը ներկայացվել է պատմական զարգացման համատեքստում՝ սկսած վերականգնվող հին իրանական լեզվական վիճակից մինչև միջին և վաղ նոր պարսկերեն, որոշ դեպքերում նաև՝ նորագույն շրջան:

### **ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխատանքի մի շարք խնդիրներ ու դրույթներ լուսաբանվել են Հայաստանի հանրապետական գիտական «Orentalia» ժողովածուի, «Կանթեղ» ժողովածուի, Հնդկաստանում տպվող IJRLS միջազգային հանդեսի, 2015թ. Թեհրանում և Երևանում կայացած իրանական գրականության, լեզվական և մշակութային կապերին նվիրված միջազգային գիտաժողովի աշխատանքների շրջանակում:

Ատենախոսությունը քննարկել և պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱՆԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը կազմված է ներածությունից և երեք գլուխներից, որոնք ներառում են ենթագլուխներ, եզրակացություններից, համառատագրություններից և զրականության ցանկից:

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ ներկայացվում են ընդհանուր դիտողություններ իրանական էպոսի գրման ժամանակաշրջանի, դրա հեղինակի՝ Ֆիրդուսիի վերաբերյալ: Ներածության մեջ ներկայացվում է էպոսի սկզբնաղբյուրների խնդիրը, որը ներառում է բանավոր և գրավոր տեսությունների հարցը:

«Շահնամեն» կարևորվում է նաև որպես պատմական ու ազգագրական աղբյուր և մշտապես գտնվում է գիտնականների ուշադրություն կենտրոնում: Լեզվական ուսումնասիրությունը կատարել հնարավոր չէ՝ առանց հաշվի առնելու պոեմի համապարփակ բնույթը, և ներածության մեջ ներկայացվում է նաև էպոսի պատմական և ազգագրական նշանակություններն ու կողմերը: Այստեղ անդրադարձ է կատարվում նաև էպոսի գաղափարախոսական կողմին և իրանական արքունիքում ու հասարակության մեջ էպոսի կատարած դերին:

«Շահնամեն» բաղկացած է նախերգանքից և երեք անհավասար մասերից՝ դիցաբանական, դյուցազնական և պատմական: Ներածության մեջ համառոտ կերպով անդրադառնում ենք այս հատվածների բովանդակային խնդիրներին և Ֆիրդուսիի կյանքի որոշ իրադարձությունների պարզաբանմանը:

«Շահնամեն»-ի բառանյութի ուսումնասիրությունը սկսվում է Ներածության մեջ էպոսի գրման ժամանակաշրջանի լեզվական իրավիճակի մանրամասնումով, նոր պարսկերենի ձևավորման և «Շահնամեն»-ում դրա ներկայացվածության խնդիրների արծարծումով:

Ֆիրդուսիի «Շահնամեն» էպոսը իրանական մշակութային այն հուշարձաններից է, որը համեմատաբար լավ է հետազոտված: Այս ստեղծագործության մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, էպոսին անդրադարձել են ինչպես պարսիկ, այնպես էլ այլազգի հետազոտողներ, որոնք էպոսը դիտարկել են տարբեր տեսանկյուններից: Բավականին մեծ խումբ են կազմում Ֆիրդուսիի կյանքին, գործունեությանը, էպոսի ստեղծման նախադրյալներին, սկզբնաղբյուրներին վերաբերող հետազոտությունները:

Հետազոտությունների մեկ այլ խումբ էլ անդրադառնում է էպոսի ծագման, հասարակական ու պատմական նշանակության և կարևորության, կերպարների առանձնահատկությունների, բովանդակային ու պատկերային համակարգի, լեզվական խնդիրների, գեղարվեստականության ու այլ հարցերի:

Վերը նշված տեսանկյուններից էպոսը հանգամանորեն քննվել է Հ. Օրբելու, Ֆ. Շփիգելի. Ս. Նազարյանցի, Ի. Զինովի. Յ. Դարմսթեթերի, Թ. Նյուդեթեի, Վ.

Բարտոլդի, Ի. Բրագինսկու, Կ. Տրավերի, Ե. Բրաունի, Ա. Քրիբստենսենի, Ա. Կրիմսկու, Յու. Մառի, Ե. Բերտելսի, իրանցի գիտնականներ Ռ. Շաֆադի, Ս. Չանդի, Մալեք օլ-Շոարա Բահարի, Ս. Նաֆիսիի, Խալեդի Մոթլադի, Աբուլֆազ Խաթեբիի և այլոց ուսումնասիրություններում:

1971թ. Իրանի մշակույթի նախարարության կողմից հիմնվեց “Bonyād-e Šāhnāme-ye Ferdowsi” («Ֆիրդուսիի «Շահնամե»-ի հիմնադրամ») միությունը, որը գործում է մինչև այժմ և համակարգում է շահնամեագիտության ոլորտում կատարվող բոլոր գիտական ու հասարակական աշխատանքները: Կազմակերպության առաջին ղեկավարն է եղել հայտնի գիտնական Ա. Մինովին, իսկ գործունեությանը մասնակցել են իրանցի ականավոր գիտնականներ Փ. Խանլարին, Ա. Չարյաբը, Մ. Ֆորուզը, Ա. Թավազզոլին և այլք: Այսօր Մեծ Բրիտանիայի Քեմբրիջի համալսարանում գործում է շահնամեագիտության կարևոր կենտրոն, որը համակարգում է Ֆ. Աբդուլանան: Այս կենտրոնի ջանքերով հրատարակվում է *Shahnama Studies* ժողովածուն, որի առաջին հատորը լույս է տեսել 2011 թ.-ին, իսկ երկրորդ հատորը՝ 2013թ.: Այս ժողովածուները համակարգում են շահնամեագիտության բնագավառում կատարվող ուսումնասիրությունները՝ պատմական, տեքստային, կրոնական, արվեստաբանական և այլ ուղղություններով: «Շահնամե»-ի լեզուն էպոսի վերաբերյալ կատարված հետազոտությունների շարքում փոքր տեղ է զբաղեցնում: «Շահնամե»-ի լեզվի ուսումնասիրությանը կամ բառապաշարի վեր հանմանը ուղղված կարևորագույն ուսումնասիրությունը Ֆ. Վոլֆի *Glossar zu Firdosis Schahname* աշխատությունն է, որում գիտնականը վեր է հանել էպոսի հիմնական բառապաշարը, տվել է բառերի թարգմանություններն ու օգտագործման հղումները<sup>1</sup>: Այս աշխատությունը ատենախոսության մեջ գործածված է աղբյուրային նշանակությամբ: Մյուս կարևոր լեզվաբանական աշխատությունը, որի համար նյութ է եղել «Շահնամե»-ի տեքստը, Վ. Լենցի «Die nordiranischen Elemente in der neupersischen Literatursprache bei Ferdosi» (1926) ուսումնասիրությունն է. այստեղ գիտնականը քննել է հյուսիսարևմտյան բառաշարքի մի ստվար հատված՝ ավանդված պարսկերենում «Շահնամե»-ի միջոցով: Իհարկե, այս աշխատության բազմաթիվ բառամիավորներ ավելի ուշ ենթարկվել են նոր քննությունների ու նոր մեկնաբանությունների:

Լեզվական քննությունները ուղղակի կամ ոչ ուղղակի կերպով տեղ են գտել բազմաթիվ ուսումնասիրություններում, որոնք հեղինակել են թե 20-րդ դարասկզբի և թե ժամանակակից գիտնականները: Հայ իրականության մեջ Ֆիրդուսիի «Շահնամե»-ն եղել է ազգագրական, պատմական, աղբյուրագիտական ու մշակութաբանական ուսումնասիրությունների առարկա:

«Շահնամե»-ի առասպելական-վիպական մոտիվները Ֆիրդուսիից շատ առաջ էլ տարածված են եղել հայ ժողովրդի միջավայրում և արձանագրվել են հայ

---

<sup>1</sup>Wolff, F., 1965, Glossar Zu Firdosis Schahname, Hildesheim.



մատենագիրների կողմից: «Շահնամե»-ի տաղաչափությամբ գրվել են չափածո ստեղծագործություններ, իսկ դրական և բացասական կերպարները որպես չափանիշ են օգտագործվել հայ գրականության մեջ բարոյագիտական հասկացողությունների և պատկերավոր մտածողության համար: Բանահյուսության բնագավառում առասպելական և վիպական մոտիվները տարածված են եղել երկու ժողովուրդների մոտ էլ, որոնք ժամանակի ընթացքում վեպի, առասպելի, գրույցի, հեքիաթի միջոցով հարազատացել և նոր որակ են ստացել: Այս համատեքստում դժվար է ասել, թե որ մոտիվն է իրանականը և որը՝ հայկականը, և ճիշտ է արձանագրել դրանց նմանությունների ու զուգահեռների փաստը:

Ֆիրդուսիի կյանքի և պոեմի ուսումնասիրությունները հայ գիտնականների կողմից համակարգված ձևով ներկայացվել են պոետի ծննդյան հազարամյակին նվիրված միջոցառումների ժամանակ հրատարակված «Ֆիրդուսի» ժողովածուի մեջ, որը ներառում է ուսումնասիրություններ «Շահնամե»-ի աղբյուրների, առասպելական-վիպական մոտիվների մասին ևլն: Ժողովածուում ընդգրկված են հայ հայտնի գիտնականներ Կ. Մելիք-Օհանջանյանի, Մ. Աբեղյանի, Գ. Լևոնյանի, Ա.ս. Շահնագարյանի ուսումնասիրությունները: Ժողովածուի վերջում զետեղված է 1915 թ. Պ. Պողոսյանից (Նարեկ գյուղ) գրի առնված «Ռոստամ-Ջալ» ժողովրդական վեպը: Ֆիրդուսիի ծննդյան հազարամյակին նվիրված հրատարակություններից էր նաև Ռ. Աբրահամյանի «Ֆերդոսին և իր Շահնամեն» գրքույկը (Թեհրան, Հրատ. Սոդերն, 1934, 157 էջ), որտեղ հեղինակը անդրադառնում է պոետի ինքնակենսագրությանը և պոեմի տաղաչափական, սյուժետային ու բանասիրական խնդիրներին:

Ներածության մեջ անդրադարձ է կատարվում նաև «Շահնամե»-ի թարգմանություններին և, մասնավորապես, հայերեն տարբերակներին:

Սույն աշխատանքում գործածվել է «Շահնամե»-ի հրատարակություններից թերևս գիտական առումով առավել վստահելի ու հայտնի տարբերակը՝ հրատարակված Մոսկվայում: Ակադեմիկոս Ղաֆուրովը առաջինը մշակեց այս հրատարակությունը 1951թ.-ին, սակայն պրոֆ. Բերտելսը, որի մահից հետո նրան փոխարինեց Նուշինը, ավելի ուշ շարունակեց գլխավորել խմբագրական թիմը: Էպոսը համակարգվեց 9 հատորներում և հրատարակվեց Մոսկվայում 1960-ից 1971թթ. ընթացքում: Քննական բնագիրը կազմվել է 13-րդ դ. վերջին և 14-րդ դարասկզբին գրված հետևյալ ձեռագրերի հիման վրա, այսինքն՝ այնպիսի ձեռագրերի, որոնք գրվել են Բայսունդուրյան «Շահնամե»-ի ընդօրինակումից առաջ (1425թ.):

1. Լոնդոնի Բրիտանական գրադարանում գտնվող N21103 ձեռագիրը, որը թվագրվում է 1276թ.,
2. Լենինգրադի Մալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանում գտնվող N 329 ձեռագիրը, որը թվագրվում է 1333 թ.,

3. Լենինգրադի ԳԱ Արևելագիտության ինստիտուտում պահվող N S.1654 ձեռագիրը, թվագրվում է 1445 թ. և նույն ինստիտուտի N S.822 ձեռագիրը, որը թվագրվում է մի փոքր ավելի ուշ՝ 15-րդ դ.:

Այս բնագրի կազմման ժամանակ խմբագրական խորհուրդը հիմք է ընդունել նաև Ալի ալ-Բունդարիի կողմից արված արաբերեն թարգմանությունը, որը թվագրվում է 1223-4թթ.:

Թեհրանում վերահրատարակվել են առաջին և երկրորդ հատորները՝ Ռուստամ Ալիևի և Օսմանովի խմբագրությամբ: Այս վերահրատարակության համար վերանայվեցին նոր ձեռագրեր ևս: Վերջին վերահրատարակությունը կատարվել է 1991 թ., որն էլ սույն ատենախոսության համար սկզբնաղբյուրային նշանակություն ունի:

### **ԳԼՈՒԽ I. Պարսկերենի բնիկ բառապաշարը էպոսում**

Ատենախոսության առաջին գլխում ընդհանուր դիտողություններից հետո ներկայացվում է էպոսում վկայված պարսկերենի բնիկ բառապաշարը՝ ըստ իմաստային խմբերի:

Պարսկերենը իրանցիների ազգային ինքնության հարցում յուրահատուկ խորհրդանիշ է: Հորդորը՝ համակարգել Իրանի ողջ ազգային ժառանգությունը, հստակորեն ձևակերպվեց Սամանյանների օրոք՝ բազմաթիվ սերունդներ Ֆիրդուսիից առաջ: Բազմաթիվ շահնամներ կազմվել էին X դ. ընթացքում՝ ներառյալ արձակ «Շահնամեն» և առաձին չափածոն՝ Դադիդի կողմից կազմված և հանձնարարված Սամանյան Ամիրի կողմից (Ֆիրդուսիի կողմից հետագայում ընդգրկվեց նրա «Շահնամե»-ում՝ Դադիդի մահից հետո՝ մոտավորապես 979թ.-ին): Ասադի Թուսիսի՝ պարսկերենի առաջին բառագետներից, նույնպես ստեղծեց մի պատմական չափածո էպոս՝ «Գարշասբ-նամե», 1066թ.: Այն համարվում է «Շահնամե»-ի ազդեցությամբ գրված ստեղծագործություն, որը հետագայում հավելագրումների տեսքով տեղ է գտնում էպոսի տարբեր ձեռագրերում: Ֆիրդուսիի «Շահնամեն»՝ ազգային լեզունդի չափածո տարբերակը, էպիկական ժանրով և առոգանությամբ, բերում էր լեզվական նոր չափանիշ: Նախ՝ ստեղծագործությունն արագորեն սովորում էին, պատմում և լայնորեն նմանակում ամբողջ պարսկական աշխարհում: Պարսիկ և օտար գիտնականները համարում էին «Շահնամեն»՝ գաղափարական վեկտոր, շարժիչ ուժ՝ դեպի իրանական հին քաղաքակրթություն և իսկական պարսկական մշակույթ: Ինչպես ինքը՝ Ֆիրդուսին է ասել՝ *'Ajam<sup>2</sup> zenda kardam ba-d-in Parsi* «Իրանը կենդանացրի

---

<sup>2</sup> *Ajam* անունը տրվել է միջնադարյան արաբական գրականության մեջ իսլամական կայսրության *ոչ-արաբ* բնակիչներին, սակայն մասնավորեցվել է իրանցիների նկատմամբ: Ծագումնաբանորեն՝ *'ajama* բայը արաբերենում նշանակում է «անհասկանալի խոսել, մթմթալ», ըստ այդմ՝ *'ajam* նշանակում է «անհասկանալի լեզվով խոսողներ», այսինքն՝ «ոչ արաբներ»: Ընդ որում, տերմինը հնարավոր էր կիրառել բոլոր ոչ արաբ ժողովուրդների նկատմամբ, որոնք հայտնվել են արաբների արշավանքների ճանապարհներին, ինչպես, օրինակ, հին հույները անվանում էին «բարբարոս» իրենց ոչ քաղաքակիրթ հարևաններին:

այս պարսկերենով: Փաստորեն, «Շահնամեն» կատարեց կարևոր առաքելություն՝ կենդանացնել, տարածել, կանոնակարգել պարսկերենը՝ իր ողջ բառապաշարային հարստությամբ:

Լեզվի բառապաշարը, ըստ ծագման, բաժանվում է մի քանի շերտերի: Գլխավոր շերտը բնիկ բառերն են, որոնք պատմականորեն լեզվի բառապաշարի մաս են կազմում: Բնիկ բառերը, որոնք ներկայացվել են սույն ատենախոսությունում, հետևյալն են՝ ընտանիք, արյունակացական-ազգակցական-անձնանիշ, բարեկամական կապեր ցույց տվող, կենդանական, բուսական աշխարհներին վերաբերող, աստվածությունների ու «գերբնական» կերպարների անվանումներ, երկրագործությանն ու անսանապահությանը վերաբերող բառեր և հասարակության բաժանման դասերի անվանումներ:

Ազգակցական հարաբերություններ արտահայտող և անձնանիշ բառերի շարքում քննված բառամիավորները մեծ մասամբ առկա են նաև ժամանակակից պարսկերենում: Այս շարքում առանձին հիշատակման է արժանի **pisar** «տղա, որդի» < \*putra-/puθra- միավորը, որի բերված հարավ-արևմտյան տարբերակից բացի՝ էպոսում գործածվում է նաև հյուսիսարևմտյան *pur/puhr* ձևը՝ \*-θr- > -hr- > -r- օրինաչափ զարգացմամբ: *zāda*, *farzand* «որդի» հայտնի բառամիավորներից բացի՝ էպոսում վկայվել է նաև այսօր մի քանի բարբառներում պահպանված **rōd** բառը < հին իր. \*fra-hūta- նախաձևից, հմմտ.՝ Իսֆահանի բարբառներում՝ *ruja*, *ruza*, *rud*, քրդերեն՝ *rōta*, բախտիարի՝ *rula* կն: Էպոսում «ամուսին» իմաստով գործածվող հիմնական միավորը **šōy** –ն է < մ. պ. *šōi*, իսկ **šōhar** ձևը, որը այսօր առավել գործածական է ժամանակակից պարսկերենում և հանգում է ալ. \*šāudrak- ձևին, պոեմում վկայվել է միայն մեկ անգամ: Ազգակցական կապեր արտահայտող որոշ միավորներ էլ ունեն նկարագրական բնույթ՝ **barādar šauhar** «տեգր», **pidarzan** «աներ» և այլն: Աստվածությունների ու «գերբնական» կերպարների հետ կապված բառերի շարքին պատկանող բառամիավորներն էպոսում մեծ թիվ են կազմում, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ստեղծման ու զարգացման յուրահատկությունները և կրում է կրոնական՝

---

Սակայն ինչպես և հույները, որոնք պարսիկների նկատմամբ մասնավորեցրին «բարբարոս» տերմինը, որպես իրենց ամենամեծ թշնամիների, այնպես էլ արաբները նրանց «*աջաւն*» կոչեցին: Այսպիսով, *ʾajam -p* նվաստացուցիչ տերմին էր, որն օգտագործվում էր արաբների կողմից վաղ իսլամական շրջանում իրենց քաղաքական ու սոցիալական գերակայությունը նշելու համար: Սակայն 9-րդ դարից ոչ արաբները, և առաջին հերթին՝ իրանցիները հաստատեցին իրենց սոցիալական ու մշակութային հավասարությունը արաբների հետ և, ինչու ո՛չ, նաև գերակայությունը: Ամեն դեպքում միշտ կար որոշակի առումով հիացմունք «*Աջաւն*»-ի նկատմամբ՝ որպես հին մշակույթի ու ավանդույթների կրողի, և ժամանակի ընթացքում հակասությունը այս երկու տերմինների՝ *աջաւն ու արաբ*, սկսեց մարել, և պարսիկները, իսլամական աշխարհում և՛ իրենց թվով, և՛ կարողություններով նշմարելի դիրքի հասնելով, «*աջաւն*»-ը մնաց պարզապես էթնիկական ու աշխարհագրական տարածքի նշանակյալ: Բսկ արդեն սելջուկյան շրջանի աշխարհագրական երկերում Միջագետքը անվանվում է՝ Erāq ‘Arabī’ ի հակադրություն հյուսիսարևմտյան Իրանի կամ Ջեբալի, և հին Սարաստանը կոչվում է՝ Erāq ‘Ajamī.

գրադաշտականության, քրիստոնեական, մանիքեական և տեղական-հավատալիքային ազդեցությունները: Դրանք նշված գործոնների համատեղության արդյունքում են ստեղծվում և այդ իսկ պատճառով հեռանում են իրենց իսկական նշանակություններից կամ այլ դրսևորումներ ունենում: Առանձին ենթաբաժին են կազմում հին իրանական աստվածությունների անունները, որոնք գրադաշտականության շղարշի տակ ենթարկվել են փոփոխությունների ու անցնելով էպոսի պրիզմայի միջով՝ շարունակել իրենց երթը նոր իրանական լեզուներ: «Շահնամեն» առանձնանում է այս կարգի եզրույթների ու բառերի առատությամբ, որոնց պատմության ուսումնասիրությունը առաջին հերթին պետք է դիտարկել ազգագրական, պատմա-մշակութային տեսանկյուններից. դրանք մշակութային, գաղափարական, սոցիալական ու մշակութային իրողություններ են: **Dēv** < հին իր. \**daiwa-* (հմտ. Ավեստայում՝ *daēva*) անվան տակ Ֆիրդուսին միավորում է բոլոր տեսակի չար ոգիներին: Չահհակի պատմության մեջ պոետը մի քանի անգամ Ահրիմանի ու Իբլիսի փոխարեն օգտագործում է *dēv* բառը, այլ տեղերում *dēv mardom* (բոց. *ղև-մարդիկ*) արտահայտությունն օգտագործում է տարբեր չար ոգիների՝ ջին, սատանա, դավալիա, անվանելու համար: Էպոսում *dēv* բառօգտագործումն ածանցավոր և բարդ կազմություններում՝ *dēvbačče* «ղևի երեխա», *dēvband* «ղևին կապող», *dēvrang* «ղիվային գույն ունեցող», *dēvčīhr* «ղևի տեսք ունեցող», *dēvdel* «ղևի սիրտ ունեցող», *dēvzād* «ղևի ծնունդ», *dēvzāde* «ղևի զավակ», *dēvzad* «ղիվահար», *dēvsār*, *dēvsāz* «ղևին հարմար», *dēvsar* «ղևագլուխ», *dēvfaš* «ղևի նման»: Քննարկված **Aržang** միավորը դևերի առաջնորդն է, որին Ռոստամը կործանում է: Անվան ստուգաբանությունը թույլ է տալիս վերականգնել \**arta-θa<sup>n</sup>ha-* նախաձևը, որն ունի «ճշմարտության ազդարար» նշանակությունը, հմտ. պարթևերեն *Ārdahang*, միջին պարսկերեն *Ardahang*: Նոր իրանական գրականության մեջ այս անունը վկայվել է տարբեր կերպ՝ *Aržang*, *Artang*, *Arjang*, *Arsang*, *Arhang*, *Aryang*, *Tang*, *Čang*: Անդրադարձ է կատարվել *Pahlavi*, *pahlavānī* բառի գործածությանն ու իմաստներին, **Aždahā** -յի՝ առասպելական այս կենդանու անվան բացատրությանն ու գործառնությանն էպոսում, դրա ածանցումներին ու բառաբարդումներին՝ *aždahāduš* «աժդահայի կուրծք ունեցող, լայնակուրծք», *aždahāfaš* «աժդահայի նման», *aždahākīš* «աժդահայի կրոնն ունեցող, անհավատ», *aždahāgir* «աժդահա բռնող, ուժեղ»:

Բնիկ բառապաշարի շրջանակում քննվել են էպոսում վկայված բուսանունները: Քննարկվող բուսանունները *angōr*, *arzan/arzūn*, *isfand*, *bih*, *bādām*, *bēd*, *banafša*, *turanj*, *ābnōš*, *za'frān*, *zarēr*, *jou K(g)abast* պայմանավորված են բույսերի խորհրդանշությամբ, դիցաաշխարհընկալումային պատկերացումներով ու մարդու կյանքում դրանց ունեցած կարևոր դերով: Դրանց գեղարվեստական ընկալումները հաճախ դիտարկելի են հակադրության մեջ: Նման երևույթի դրսևորում է **aryavān** -ը, հմտ.՝ մ. պ. *argavān* բուսանունը: Վկայվել է նաև սող. *'aryw'z*, փարսյի *aryawan*: Այս բույսի լատ. անվանումն է *Cercis siliquastrum* և ունի բոսորագույն ծաղիկներ, այդ պատճառով այն երբեմն ձեռք է բերել հենց

ածականական իմաստ՝ «բոսորագույն» իմաստով: Բանաստեղծության մեջ փոխաբերական իմաստով կարմիր գույնը, գեղեցկությունը հատկապես նշելու համար գործածվում է *gol-e aryavān* հարադրությունը: Եթե *արդավանը* օգտագործվում էր գեղեցկությունը բնութագրելու համար, ապա մյուս բույս՝ **za'frān** բուսատեսակը, որը նույնպես ունի կարմիր գույն, գործածվում էր դրան հակառակ՝ կարմրությունը որպես հիվանդություն ցույց տալու համար.

Šekam kard farbi o tan šod gerān

Šod ān *aryavani* roxaš *za'frān*...(h. VII, 1243: 537).

Որովայնը փքվեց ու մարմինը ծանրացավ

Այն *արդավանի* դեմքը դարձավ *զաֆրան*:

Կենդանիների անունների լայն գործածությունը «Շահնամե»-ում պայմանավորված է ստեղծագործության բովանդակությամբ, կենդանիների պաշտամունքային ու մարդու կյանքում դրանց ունեցած նշանակությամբ: Կենդանիներն ուժի, հավատարմության ու հասարակական դիրքը ի ցույց դնելու խորհրդանիշներ են: Այս անունները հիմնականում իրանական են, սակայն որոշ դեպքերում Ֆիրդուսին օգտագործել է դրանց արաբական ձևերը ևս: Էպոսում կենդանիների նկատմամբ պատկերացումների և նրանց դերի ու նշանակության մասին էին վկայում նաև դրոշները, որոնք էպոսում ներկայացված են բազմիցս և ի ցույց են դնում գույնի և պատկերների խորհրդապաշտությունը: Դրոշները մշտապես ուղեկցում են փահլևաններին՝ կովի ու հանգստի ժամանակ: Դրոշների վրա հիմնականում պատկերված են հետևյալ կենդանիներն ու թռչունները՝ գայլ, առյուծ, փիղ, վարազ, արծիվ, փյունիկ և այլն: Էպոսում ամենաշատ հանդիպող դրոշը Ռոստամինն է, որի վրա պատկերված է մի ածդահա, որը վկայում է, որ Ռոստամի մայրական կողմն ունի ածդահակյան ծագում: Արծիվը Սասանյան արքաների հիմնական խորհրդանիշներից էր և պատկերվում էր թևատարած կամ թևերը փակած: Այն իշխանություն և հզորություն էր խորհրդանշում: Քեյխոսրովի մանուշակագույն դրոշին պատկերված էր առյուծ, Գիլի դրոշին՝ գայլ, Ռահամի դրոշին՝ վագր, Ֆարհադի դրոշին՝ եղնիկ, Գորագեի դրոշին՝ վարազ և այլն: Ատենախոսության մեջ ծագումնաբանական և իմաստային քննության են ենթարկվել *āhū*, *asb*, *babr*, *pīl*, *mār*, *šayāl*, *yōz*, *palang*, *xarčang*, *gāv*, *dīvpāy*, *tāvus*, *uqāb*, *āluh*, *lāšxur*, *dāl* անունները:

«Շահնամե»-ի սկզբում, Ջամշիդի իշխանության տարիներին, խոսվում է հասարակության չորս դասերի մասին, որոնց անունները նշվում են: Այս բառերը համարվում են «ուսյալ բառեր» (*mot savant*) և փաստորեն ներկայացնում են իրենց հիմնական հին ձևը՝ 1. *Ātōrniyān / āturōniyān* – առաջին դասի անունն է, որը ունի ձեռագրական տարատեսակ ընթերցումներ և հասարակության առաջին խավը «հոգևորականներն» էին, 2. *Tīštāryān* – սրանք հասարակության երկրորդ խավն էին, որոնք «զինվորականներն» էին, 3. *Pasūyi/pasūhi* – սա երրորդ դասն է, որի մեջ մտնում են հողագործներն ու անասնապահները, և 4-ը՝ *Uhtūxošī* – «արհեստագործներ», որը նույնպես ձեռագրային տարբերություններ ունի՝ *ahnūxšī*, *ohtūxšī*, *ourūxšī* կլն: Բնիկ բառապաշարի մաս կազմող

երկրագործության բնագավառի բառամիավորները համեմատաբար քիչ են վկայված էպոսում, քանզի պոեմը իրանական շահերի ու արքաների, ազնվականների ու դյուցազունների պատմությունն է, և շատ ավելի քիչ տեղ է հատկացված հասարակ ժողովրդի կյանքին, որի հիմնական զբաղմունքներից էր երկրագործությունը: Այս սահմանափակ քանակից ներկայացված ձևերից էին. **Bil** - «բահ», հմմտ.՝ մ. պ. *byr*, քրդ. *bēr*, բելուջ. *bard*, գաբրի *bard(a)*, հվ. բաշագերդի *bahr*, *bohr*: «Շահնամե»-ում վկայվել է մի քանի անգամ, ժամանակակից բազմաթիվ բարբառներում այն ստացել է նաև «մեծ շերեփ»-ի իմաստ, հմմտ. աբխազերի՝ *bahrā* և այլն: **Arra** - «սողոց». էպոսում վկայված է բազմիցս: Այս գործիքի անվան հետ է կապված, ըստ երևույթին, հյ. *nirwaq* գործիքի անունը, որը V դ.-ից վկայված է հայերենում: Օագում է հ. իր. *\*harnaka-* (\*harn-) նախաձևից, միջին իրանական ձևը կարելի է վերականգնել *\*harrak* ձևով: Բառակազմի հ- հնչյունը հետագայում ընկել է՝ երկրորդային զարգացման ընթացքում: «Շահնամե»-ում վկայվել են և ածանցավոր *arre*, և՛ առանց ածանցի՝ *arr* ձևերը: **Dās** - «մանգաղ, գյուղատնտեսական ձեռքի գործիք՝ խոտ և հացաբույսեր հնձելու համար» < հին իր. *\*da-Ōra-* ձևին են հանգում նաև գիլ. և մագ. *dāz*, օրմ. *dāš*, լուր. *tāš*, շահրուդի *demā* բառերը: **Gurāz** - «բահ, որով փորում են հողը»: Այս բառը վկայված է «Շահնամե»-ում միայն մեկ անգամ: Իրանական այլ լեզուներում հմմտ.՝ մագ. *gervāz*, պրսկ. *kirāz*, օրմ. *kurāzi*, փաշտու *krōz* և բել. *korāz* «բահ»: **Kulang** - «բլունգ, հողը փորելու երկրագործական գործիք» և **māla** - «տափան, ցաքան, երկրագործական գործիք, որով հարթեցնում են հողը»:

Անասնապահության ոլորտին վերաբերող բառապաշարն էպոսում հիմնականում կապված է ձիերի, նրանց համար գործածվող տարբեր իրերի ու հարմարանքների հետ՝ **junāy** - «թամբ, գրաստի մեջքին դրվող նստելու հարմարանք հեծյալի համար», ըստ երևույթին, հանգում է թյուրքերեն *yonāq* ձևին, հմմտ.՝ խորեզմ. *ʃnʹ*: Քննարկված մյուս միավորն է **zēn** - «թամբ, գրաստի մեջքին դրվող նստելու հարմարանք հեծյալի համար», որը գործածվում է ոչ միայն ժամանակակից պարսկերենում, այլ նաև իրանական տարբեր լեզուներում ու բարբառներում, հմմտ.՝ մագ., Ֆարսի բրբռ.՝ *zēn*, քրդ., Քերմանի բրբռ.՝ *zīn*, օրմ.՝ *zīnd*: Օագում է հ. իր. *\*zaina-* «կաշվե» < *\*z-* «կաշի, մորթի» ձևից, հմմտ.՝ ավ. *īzaēna-* «կաշվե»: Երրորդ նույնիմաստ միավորը՝ **Kōha** - «թամբ, գրաստի մեջքին դրվող նստելու հարմարանք հեծյալի համար» էպոսում լայնորեն վկայված միավորներից է, հավանաբար, < մ. պ. *kōfak* «թամբ» < հին իր. *\*kaufaka-* < *\*kaufa-* «լեռ» նախաձևից: **Pālān** - «համետ, գրաստի մեջքին դնելու հարմարանք՝ բեռ բարձելու, ինչպես նաև նստելու համար»: Այս բառը բավական հաճախ է հանդիպում Ֆիրդուսիի մոտ: **Namadzēn** - «տապաձակ, թամբի տակից ձիու վրա փռելու գորգ, թաղիք», որը նկարագրական ձևով կազմված միավոր է՝ *namad* «թաղիք» և *zēn* «թամբ»: **Sipār/supār** - «խոփ, գուրանի կամ արորի մետաղյա մասը, որը խրվում է հողի մեջ և պատռում նրա շերտը»: Օագում է հ. իր. *\*spāra-* նախաձևից և կապված է սանսկրիտ *sphāla-* ձևի հետ < հնդեվր. *\*sp(h)el-* «միմյանցից առանձնացնել»: Իրանական լեզուներում հմմտ.՝ քրդ. *āspārā. asperēh*, գուրանի *āspārā*, բախտ. *bil-*

*esbār*, խունսարի *esberü*, արիանեի *esbār* և այլն: **Yöy** – «լուծ, փայտե ձող, որը դնում են լծվող գույգ եզներին պարանոցին և դրան միացնում գուրանը, արորը»: **Zangöla** – «զանգուլակ, փոքր զանգակ, որը կախում են ձիերի և այլ անասունների պարանոցից»: Այս բառը մեկ անգամ վկայել է Ֆիրդուսին և ընդհանուր է բազմաթիվ իրանական լեզուների ու բարբառների համար, հմմտ.՝ քրդ.՝ *zangil*, մագ.՝ *zangele*, Քաշանի բարբառ.՝ *zangöla/zangüla*, գիլ.՝ *asbe-zang* (բառ.՝ «ձիու զանգ») և այլ նկարագրական ձևով տրված տարբերակները: Ինչպես կարելի է նկատել, *zangule* ածանցավոր բառը բաղկացած է իր. *zang* «զանգ» հիմնական ձևույթից և թյուրք. *-ule* փոքրացուցիչ փոխառյալ վերջածանցից: Հայերենի բարբառներում նույն իմաստով կիրառվող *զանգուլակ* պարսկական բաղադրությունը, ըստ երևույթին, ընկալվել է որպես մեկ պարզ բառ, որին ևս ավելացվել է նվազականություն ցույց տվող իր. *-ak* վերջածանցը, հմմտ.՝ զանգուլակ, զանգուլակ: **Lugām (ligām)** – «լկամ, սանձի մետաղյա ձողիկը, որը դրվում է ձիու բերանը՝ սանձահարելու նպատակով»: Էպոսում ունի լայն կիրառություն: *Logām* բառը հանդիպում է տարածաշրջանի մի շարք լեզուներում ևս, հմմտ.՝ արաբ.՝ *lojām*, քրդ.՝ *laghāv*, թուրք.՝ *gem* և այլն:

Առաջին գլխի վերջին ենթաբաժինը ներկայացնում է էպոսում հանդիպող ածականի և գոյականի բառակազմական մանրակաղապարները, որոնք նոր իրակություններ են բացահայտում ածականների և գոյականների կազմության ու իմաստաբանության տեսակետից, մասամբ են պահպանված ժամանակակից պարսկերենում:<sup>3</sup> Գոյականների ու ածականների բառակազմական կաղապարները հիմնականում համընկնում են ժամանակակից պարսկերենի օրինաչափություններին: Առանձնացնում ենք ածանցավոր և բարդ կազմություններ, իսկ վերջիններիս բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը լինում է երկու տեսակ՝ համադասական և ստորադասական: «Շահնամե»-ում բառակազմության հիմնական եղանակները բարդությունն ու ածանցումն են, ընդ որում, բարդության տեսակարար կշիռը խիստ մեծ է ածանցման համեմատությամբ: Էպոսի բառապաշարի համար բնորոշ են երկբաղադրիչ, հազվադեպ՝ եռաբաղադրիչ բարդությունները: Երկբաղադրիչ բարդությունների մեջ սովորաբար հիմքային արժեք ունի երկրորդ բաղադրիչը, եռաբաղադրիչ բարդությունների մեջ՝ երրորդը, այսինքն՝ որպես բարդության հիմք (լրացյալ) հանդես է գալիս վերջին բաղադրիչը:

Բարդությունների մեջ իշխողը երկարմասններն են, որոնք լինում են՝ *Bādpa* – «ձի», *Dameždehā* – «մահ», կազմված է *dam-* «շունչ» և *-eždehā* «վիշապ» միավորներից, *Badrag* – «տհաճ», կազմված է *bad-* «վատ» և *-rag-* «երակ» բաղադրիչներից, *Badsegāl* – «չարական», կազմված է *bad-*«վատ» և *-segāl* «միտք» բաղադրիչներից, *Xastedil* «տխուր, վշտացած» կլն: Երկարմատ բարդությունների մեջ առաջին բաղադրիչը լրացում է դառնում երկրորդի համար: Բայց երբ բարդ

<sup>3</sup>Այս լեզվական իրողությունները այժմ օգտագործվում են լեզվի նորաբանությունները՝ նոր առարկաների, երևույթների ու հասկացությունների բառային անվանումներ կերտելիս:

բառը կազմված է լինում երկուսից ավելի արմատներից, այդ հարաբերությունը փոխվում է: Եռաբաղադրիչ բարդությունների դեպքում առաջին երկու բաղադրիչները դառնում են անմիջական կազմիչներ բարդ բառի համար: Էպոսի բառապաշարում եռարմատ բարդությունները մեծ թիվ չեն կազմում. դա պայմանավորված է բառակազմական այս կաղապարի տարածվածությամբ լեզվի ավելի ուշ շրջաններում՝ *purazdūd* – «տխուր, տրտմագին», կազմված է *Pur-* «լիքը», *-az-* «-ից», *-dūd* «ծուխ» միավորներից, *tārakandarsamāk* – «բարձր», բաղկացած է *tārak-* «զագաթ», *-andar-* «մեջ», *-samāk* «երկինք» միավորներից և այլն:

## ԳԼՈՒԽ II

### «Շահնամե»-ի բառապաշարն ըստ ծագման

Պարսկերենը, որ իրանական լեզուների հարավարևմտյան ենթաճյուղի լեզու է, իր մեջ ընդգրկում է ոչ միայն բազմաթիվ պարթևական և հյուսիսարևմտյան բարբառային տարրեր, այլև շատ փոխառություններ արևելաիրանական լեզուներից և առաջին հերթին՝ սողդերենից: Ընդ որում, այս փոխառությունները պարսկերենի բառապաշարի անբաժանելի մասն են, որոնք միայն միջերթիկ շփումների արդյունքում չեն առաջացել: Շփումների բնույթ ունեցող փոխառված բառաշերտը, որն ի հայտ է գալիս տարբեր ժողովուրդների սերտ կապերի արդյունքում, բոլոր լեզուներին բնորոշ երևույթ է (ինչպես պարսկերենում՝ արաբական, թյուրք-մոնղոլական, հնդկական փոխառությունները կն): Պարսկերենում արևելաիրանական, նաև հյուսիսարևմտյան տարրերի առկայությունը պայմանավորված է ոչ միայն սողդերի կամ պարթևների հետ սերտ շփումներով, այլ նաև վերբարբառային լեզվի ու գրականության ստեղծման հանգամանքով: Ինչպես ասվեց, IX-X դարերի ընթացքում պարսկերենը արաբերենի հետ միասին *lingua franca* էր ամբողջ իրանական տարածաշրջանի համար արևելքից մինչև արևմուտք: Ավելի ուշ այս դերը մնաց միայն պարսկերենին, իսկ արաբերենը ծառայում էր զուտ որպես կրոնական միջավայրի ծիսական լեզու: Պարսկերենը փաստորեն դարձավ արաբերենից հետո երկրորդը, իսկ կիրառական տեսանկյունից դարձավ ընդհուպ իսլամի առաջին լեզու:

Նոր պարսկերենը միջին պարսկերենի ժառանգ է (Սասանյան Պարսկաստանի պաշտոնական լեզվի), իսկ վերջինս էլ՝ հին պարսկերենինը, որն էլ մեզ է հասել Աքեմենյանների ժամանակաշրջանի սեպագիր տեքստերի տեսքով: Այս լեզվի հայրենիքը Ֆարսն է, Աքեմենյանների գլխավոր ժառանգակիրը՝ Արևմտյան Իրանի համարյա կենտրոնում: Չնայած պարսկերենը մինչև VII դարը սահմանափակվել է միայն Արևմտյան Իրանի, իսկ հնում՝ միայն Ֆարսի տարածքներով, ավելի ուշ՝ Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի շրջաններում ստանում է համընդհանուր մասշտաբ՝ ծառայելով և՛ որպես շփման միջոց, և՛ գրական լեզու: Սասանյանների կայսրության անկմանը զուգահեռ՝ վաղ իսլամական առաջին տասնամյակներում արաբական լծի տակ գտնվող հազարավոր պարսիկներ՝ Ֆարսի բնակիչներ, ապաստան են գտնում Տրանսոկսանիայում, հատկապես Սողդում-Բուխարայում և այլ խոշոր



քաղաքներում: Չնայած համարյա մինչև X դարը տեղի ժողովուրդը խոսում էր սողդերենով, սակայն Իրանի արևելյան շրջանում հաստատված արաբական տիրապետության արդեն առաջին շրջանում բնակչությունը երկլեզու է դառնում: Բացի այդ՝ արաբների հետ դեպի արևելք քոչեցին նաև շատ թվով իսլամ ընդունած պարսիկներ և՛ որպես արաբական «հաճախորդներ» (*mawālī*): Այս երևույթը ավելի ամրապնդեց պարսկերենն այդ շրջանում: Այն դարձավ Միջին Ասիայում սողդերի և պարսիկների շփման հիմնական լեզու: Արաբ-մուսուլմանական հիմքի վրա ստեղծված մեկ պետության կազմի մեջ մտնող երկու տարբեր իրանական աշխարհների միախառնումը հանգեցրեց վառ ու բազմազան մշակույթի ստեղծմանը, որն էլ արտահայտվել է գրական և գիտական հարուստ ժառանգությամբ: Պատմական այս իրադարձություններով էր պայմանավորված արևելաիրանական, մասնավորապես սողդերեն տարրի առկայությունը պարսկերենում:

### 2.1.1 Արևելաիրանական բառամիավորներ

«Շահնամեն» վկայել է նոր պարսկերենի հիմնական արևելաիրանական բառամթերքը, որի մի մասը հետագայում դուրս եկավ ակտիվ բառապաշարից՝ մնալով միայն բառարանային, գրքային, աղբյուրային մակարդակներում, այսինքն՝ բնութագրվում են կիրառության խիստ սահմանափակությամբ ու սակավությամբ: «Շահնամե»-ում և դասական պարսկերենում վկայված արևելաիրանական փոխառություններում արձանագրված հնչյունական փոփոխություններից են.

Սողդ. *β-* (մանիք. և քրիստ. սողդ. *f*) > պրսկ. *b-*, *f*

Սողդ. *δ* (*d*), *t* /*θ*/ > պրսկ. *l*,

Սողդ. *γ* > պրսկ. *γ*, *x*,

Սողդ. *-γt-* > պրսկ. *-γd-*, *-fd-*: Ատենախոսության մեջ քննված սողդական փոխառություններն են՝ *fayfūr* «չին արքայորդի», երբեմն կրճատ՝ *fūr* < սողդ. *Baybūr*, *tāl o māl (šodan)* - « ցրվել, ցաք ու ցրիվ լինել», *sitēy* «կանգուն, ուղիղ, նաև՝ երկար, լեռան գագաթ», նաև բառավերջի *-x* հնչյունով՝ *sitēx*, *faž* - «տանջանք, ցավ, նաև՝ կեղտ», *rāy* «լանջ, զառիթափ, դաշտ, նաև՝ լեռ», *čuyd* - «բու» (ժ. պ. արտասանվում է *joyd*) < սողդ. *čywt-*, *zēvar* - «զարդարանք», պոեմում՝ «թագ», *āyāz*, *āyāzidan* «սկիզբ, սկսել, սկզբնավորել», *butfōz* - «դունչ», *sangsār* «քարակոյտ», էպոսում՝ *sangsār kardan* «քարկոծել», *rēž* «ցանկություն», նաև՝ *rēžokām*, *rēžkām*, *žiyār* «աղմուկ, բարձր ձայն», *yāfa* «անիմաստ խոսքեր, բամբասանք», *āruyda* - այս բառամիավորը «Շահնամե»-ում վկայվել է «վայրի, կատաղի, դաժան» իմաստներով, *pasējīdan / pasēčīdan* «պատրաստել», *lanj* - «դուրս քաշում, դուրս բերում» < սողդերեն *dynč-*, *šinj-*, *alfanjīdan* - «հավաքել, խառնել, կուտակել, վաստակել»:

### 2.2.2 Հյուսիսարևմտյան բառաշերտ

Հյուսիսարևմտյան իրանական լեզվական զանգվածը կամ, պայմանականորեն ասված, «մարական խումբը», ուր մտնում էր նաև պարթևերենը, «ծնել» է մեծ քանակությամբ խոսվածքներ, որոնք այսօր Իրանում և դրա տարածքից դուրս

բազմաթիվ մշակույթների տեսական բնորոշող որոշիչ գործոն են: Դրանք են բելուջերենը, սեմաներենը, մագանդարաներենը, գիլբաբին, թալիշերենը, թաթերենը, սիվանդին, գաբրին, գուրանին, Քաշան-Սպահան գծի խոսվածքները, գազան (Անատոլիայում) ևլն:

Պարթևներեն կամ հյուսիսարևմտյան փոխառությունները միջին պարսկերեն մտան նաև պարթևներեն էպիկական ստեղծագործությունների պարսկականացման ընթացքում, որոնցից շատերը երկար ժամանակ չէին էլ համարվում պարթևական, իսկ դրանցից մի քանիսն էլ մասամբ կամ ամբողջովին մտնում են «Շահնամե»-ի կամ դրա հետագա հավելագրումների ցանկի մեջ՝ *Ayādgār ī Zarērān*, *Bīžan-nāma* էպիկական պոեմները և այլ պատումներ:

Հյուսիսարևմտյան լեզվատարրերը՝ հնչյունական, բառապաշարային, ձևաբանական, պարսկերենում օգտագործվում են կամ զուգահեռաբար, կամ ընդհանրապես դուրս են մղում «պարսկական» ձևերը: Պարսկերենում հյուսիսարևմտյան բարբառային շերտի առկայությունը, ինչպես նաև հակառակ երևույթը՝ պարսկական լեզվամթերքի մուտքը հյուսիսարևմտյան լեզվոլորտ, ուսումնասիրվել են դեռ անցյալ դարասկզբից Անդրեասի, Լենցի, այնուհետև՝ Տեդեսկոյի, Մայրհոֆերի, Գերշելիչի, Վինդֆորի և այլ գիտնականների կողմից, որոնք քննել են արևմտաիրանական լեզվոլորտում փոխազդեցությունների ու գուգաբանությունների խնդիրը՝ ժամանակային և բարբառային մակարդակներում: «Շահնամե» վկայել է բառապաշարի մի շերտ, որը ցույց է տալիս հյուսիսարևմտյան հնչյունական զարգացումներ, սակայն դարձել է պարսկերենի անքակտելի մասը: Նշենք նաև, որ այս բառամթերքի մի մասն էլ չնայած էպոսում գտել է կիրառություն, սակայն ժամանակակից պարսկերենում չի ամրագրվել (օր. *borz* «բարձր», *pur* «տղա, որդի», ժ. պ. *bālā, pōsar* և լն): Հյուսիսարևմտյան բառամիավորներից են՝ **Āžir** – «պատրաստ, ուշադիր, ուշիմ, ճարպիկ» բառամիավորը բավական վկայված է էպոսում: «Շահնամե»-ի բառապաշարում վկայվել է նաև նույնանուն «ձայն, աղմուկ» նշանակությամբ ձևը, որ հավանաբար ծագում է հին իր. *\*ā-jrya-/\*ā-jarya* < *\*gar-* «աղմկել, գոռալ» արմատից, հմմտ.՝ գիլ. *žigirō*, նաև դաս. պրսկ. *žayār*; **žāla** – «կարկուտ». բառույթը ծագում է հին իր. *\*jarda-*; **žerf** – «խորը», այստեղ տեղի է ունեցել *žufr* փոխառյալ բառի հվ. արմ. լեզուներին հատուկ դրափոխություն, հմմտ.՝ ավ. *jafra*: «Շահնամե»-ում վկայվել է նաև որպես հարադիր բարդություն՝ *žerfbīn* «խորատես»; **žiyān** – «վայրի» բառն օգտագործվում է, երբ հիմնականում խոսքը կենդանիների մասին է; **siṭīhr** – «երկինք». այս բառամիավորը երկու հնչյունական զարգացումների՝ *-sp-*-ի (տե՛ս՝ 6) և *-hr-*-ի պահպանման պատճառով համարվում է հյուսիսարևմտյան ձև < մ. պ. *sepehr* < հին իր. *\*spiθra* < *\*spi-* «լուսավոր լինել, փայլել» արմատից; **hužīr** – «լավ, բարի, գեղեցիկ» < պրթև. *hužīhr* < հին իր. *\*hu-čīθra* «լավ դեմք ունեցող»; **hērbod** – «քուրմ» բառամիավորը միջին պարսկերենում վկայվել է *hērbat* ձևով < հին իր. *\*āθra-pati-* «կրոնական ուսուցիչ»: Ընդ որում, նշենք, որ *hērbod* –ների հիմնական գործառույթը եղել է կրակը պահպանելը, որն արձանագրել է նաև Ֆիրդուսին: Իրանական հյուսիսարևմտյան լեզվանյութի հետքերից են նաև՝ **zafar**

– «երախ», **barzan** – «վայր, տեղ, բնակավայր», **zam** – «սառնամանիք»՝ «Շահնամե»-ում վկայված է միայն մեկ անգամ; **burz** – «բարձր» < հին իր. \**brzā*- < \**-barz* «բարձր լինել», **andarz** – «խրատ, խորհուրդ» < հին իր. \**ham-darza*- նախաձևից; **taham** «ուժեղ» < մ. պ. *tahm*: «Շահնամե»-ում վկայվել է նաև *Tah(a)matan* ձևը «ուժեղ մարմին» բառացի նշանակությամբ, որն օգտագործվել զլխավոր հերոսներից մեկին՝ Ռոստամին բնորոշելու համար, նաև *Tahamzāda* ձևով; **sipenj**- «տուն, բնակավայր (ժամանակավոր)»։ այս բառամիավորը «Շահնամե»-ում շատ կիրառվող ձևերից է, ընդ որում, զուգակցվում է *sarāy* միավորով՝ *sepenj sarāy* «աշխարհ, այսինքն՝ երկրային կյանքը» կլն:

### 2.2.3 Հնավանդ բառեր

«Շահնամե» պարսկերենի հանրագիտարան է՝ իր մեջ ամփոփելով այս լեզվի գեղեցկագույն ու հնագույն բառազանձը: Դրա մի մասը այսօր դուրս է մնացել ժամանակակից պարսկերենի ակտիվ բառապաշարից, երբեմն նույնանուն, սակայն ավելի հաճախ գործածվող միավորի պատճառով, սակայն չի կորցրել իր կարևորությունը: Ժամանակակից պարսկերենն անընդմեջ անդրադառնում է իր այս գանաձարանին, հատկապես լեզվի մաքրության պահպանման ու ոճայնացման շրջանակներում: Ենթագլխում բերվում են այն հնավանդ ու բնիկ բառերը, որոնք վկայվել են էպոսում:

### 2.2.4 Արաբերեն բառեր

Հայտնի է, որ Ֆիրդուսին «Շահնամե» գրելիս խուսափել է արաբական բառերի կիրառումից, սակայն գիտնականների որոշ խումբ, օրինակ՝ Բրաունը, նշում է, որ «Շահնամե»-ի բառապաշարի 4-5%-ը կազմում են արաբական բառերը: Մոհամադ Ջաֆար Մոյինֆարը, քննադատելով նախորդ տեսակետները և հիմնվելով Ֆ. Վոլֆի աշխատության վրա, նշում է 706 արաբական բառ, որը կազմում է «Շահնամե»-ի բառապաշարի 8.8%-ը:

Ամենահաճախ կրկնվում է *gam*- «վիշտ» բառը՝ 707 անգամ, *havā* «օդ» բառը՝ 435 անգամ և *bum o bar(r)* «երկիր» բառը՝ 239 անգամ: Կան նաև 258 բառեր, որ կիրառվել են մեկ անգամ, օրինակ՝ *šart* «պայման», *noqsan* «պակասություն», *bahr* «ծով»: Արաբական փոխառությունների մի խումբ էլ առանձնանում է բառակզբի ձայնավոր հնչյունի սղմամբ՝ *amīr* > *mīr* «էմիր», *abū* > *bū* «հայր», նախահար ձայնավորի հավելմամբ բառակզի ձայնավորից առաջ՝ *atnāb* > *tanāb* «պարան», *Aflātun* > *Falātun* «Պլատոն», արաբական իգական վերջավորության բառավերջի –t հնչյունի անկմամբ, դրափոխությանբ՝ *ketf* > *keft*: Արաբական քերականական տարրերից են «Շահնամե»-ի տեքստում բեկյալ հոգնակիով կազմված բառաձևերը՝ *atrāf* «կողմեր», *fonun* «ուղիներ, արվեստներ» կլն:

Կան նաև 89 տեղանուններ և անձնանուններ, 28 արաբականացված իրանական բառեր, 8 բառ սանսկրիտով, հունական և լատինական 30 փոխառություններ՝ իրենց արաբական կամ պարսկական տարբերակներով:

### **Գլուխ III**

#### **«Շահնամե»-ում վկայված հայերենի փոխառյալ բառաշերտը**

«Շահնամե» նոր պարսկերենի հիմնական բառապաշարի հետ վկայել է նաև հայերենի իրանական փոխառությունները: Այս շերտի ուսումնասիրությունը կարևոր է հայերենում նոր իրանական փոխառությունների ուսումնասիրության տեսակետից: Հայտնի է, որ իրանական փոխառությունները հայերենում հիմնականում պարթևական են կամ միջին պարսկական: Ընդ որում, փոխառությունների մի շերտ էլ հայերեն է ներթափանցել թե՛ միջին պարսկերենից, թե՛ պարթևերենից: Իրանական փոխառությունների մյուս շերտը ուշ շրջանին է պատկանում, որ հայերեն է մտել պարսկերենից, և էպոսը՝ որպես նոր պարսկերենի հիմնական բառապաշարի կրող, վկայել է նաև այդ փոխառությունների մի ստվար հատված:

Իրանական էպոսում և հայերենում վկայված պարսկերեն բառերի այս խումբը, որը ենթարկվել է քննության, մտնում է հիմնականում նոր փոխառությունների մեջ, որոնք մտել են նաև հայերենի բարբառներ:

Ատենախոսության այս գլխում ներկայացվում է «Շահնամե»-ում վկայված պարսկերեն բառերի մի խումբ, որը հայերենի նոր իրանական փոխառությունների մեջ է մտնում:

#### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Աբուլադասիմ Ֆիրդուսիի «Շահնամե» պոեմը (X դ.) բաղկացած է 50000 բեյթից և ունի հետևյալ կառուցվածքը. նախերգանք, որտեղ իրար են հաջորդում աշխարհարարման ու մարդարարման մոտիվները, Աստծո, իմաստության, սուլթանի ու տարբեր կառավարիչների գովաբանությունները և երեք անհավասար մասեր՝ դիցաբանական, դյուցազնական և պատմական:

2. «Շահնամե» գրված է դասական կամ նոր պարսկերենով (IX-XV դդ.). պարզ ու չափավոր հնաբանություններով լեցուն մաքուր պարսկերենով սահմանափակ քանակի արաբաբանություններով: Նկատի ունենալով լեզվի պատմական անցյալը, ներառյալ մոտ կանգնած իրանական մյուս բարբառների բառապաշարային միավորները՝ էպոսը լեզվական առումով կարելի է գնահատել որպես պարսկերենի կատարյալ շտեմարան, որը կենդանացրել, տարածել, կանոնակարգել է լեզուն և զարգացման համակարգում շրջափուլային դեր է կատարել:

3. Նոր պարսկերենը ձևավորվել է Ֆարսի բարբառների հիման վրա. վաղ իսլամական դարաշրջանում տարածվել է դեպի հյուսիս ու արևելք և գրական լեզվի կարգավիճակ ստացել Սամանյան արքունիքում: Այն դառնում է իրանական լեզուներից ամենատարածվածը և գերիշխողը տեղական լեզուների ու բարբառների նկատմամբ: Իր «գաղթի» ընթացքում նոր պարսկերենը փոխառություններ է կատարել հյուսիսում ու արևելքում խոսվող իրանական բարբառներից, որի արդյունքում ստեղծվել են փոխառությունների արևելյան և

հյուսիսարևմտյան շերտերը, որոնք հստակորեն արտացոլված են «Շահնամե»-ի լեզվում:

4. Պոեմը գրված է *մոթաղարեր* չափով. տողերը 11 վանկանի են, և յուրաքանչյուր բեյթ մի ամբողջություն է, այսինքն՝ ամեն մի երկտող ամբողջական մի միտք է արտահայտում, որի հետևանքով բազմաթիվ բառեր իրենց երկարության պատճառով փոխարինվում են այլ ձևերով. տեղի են ունենում բառերի մեջ երկար ձայնավորների կրճատումներ ու նաև երկարացումներ կլն: Այսպես օրինակ՝ *davāzdah* «տասներկու» բառամիավորը հանդիպում է *dah o do* «տասը և երկու» ձևով, *panzdah* «տասնհինգ» = *panj o dah* «հինգ ու տասը», *būd = bud* «էր», *hōš = huš* «միտք», *āmōxta = āmuxta* «սովորած», *gurōh = guruh* «խումբ» կլն: Այս չափին հարմարվելու համար Ֆիրդուսին օգտագործել է նաև պարսկերեն բառերի արաբական համարժեքները:

5. «Շահնամե»-ում վկայված պարսկերենի բնիկ բառապաշարի հետևյալ իմաստային խմբերը քննության են ենթարկվել աստենախոսությունում՝ անձնանիշ, արյունակցական-ազգակցական կապեր ցույց տվող բառեր, աստվածությունների ու «գերբնական» էակների անվանումներ, հասարակության բաժանման դասերի անունները, կենդանական, բուսական աշխարհներին վերաբերող բառեր, երկրագործությանն ու անասնապահությանը վերաբերող եզրույթներ:

6. Ընտանիք, արյունակցական-ազգակցական, բարեկամական կապեր արտահայտող քննված միավորներն են՝ *pidar, mādar, pisar, zāda, rōd, farzand, duxtār, bānū, barādar, x'āhar, niyākān, nabēr(a), xusur, dāmād, dāya, bēva, šauhar, zan, kanīz, kanīzak*: Ազգակցական կապեր արտահայտող որոշ միավորներ էլ կազմությամբ նկարագրական են՝ *barādar šauhar* «տեգր», *pidarzan* «աներ» և լն:

7. Էպոսում մեծ թիվ են կազմում աստվածությունների ու «գերբնական» էակների անունները, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ստեղծման ու զարգացման յուրահատկությունն ու կրում է կրոնական՝ զրադաշտականության, քրիստոնեական, մանիքեական և տեղական-հավատալիքային ազդեցությունները: Առանձին բաժին են կազմում հին իրանական աստվածությունների անունները, որոնք զրադաշտականության շղարշի տակ ենթարկվել են փոփոխությունների ու անցնելով էպոսի պրիզմայով՝ թափանցել նոր իրանական լեզուներ, ինչպես նաև առասպելական կերպարներն ու դրանց անվանական-գործառնությային վկայությունները: Աշխատանքում քննվել է այս իմաստային դաշտից հետևյալ բառաշարքը՝ *Dēv, Zand u Avistā, Aržang, pahlavi, pahlavāni, azdahā, Šemury, Parī*:

8. Բուսանուններն ու կենդանիների անունների լայն գործածությունը պայմանավորված է ստեղծագործության բովանդակությամբ, բույսերի ու կենդանիների պաշտամունքային ու մարդու կյանքում դրանց ունեցած նշանակությամբ: Կենդանիներն ուժի, հավատարմության ու հասարակական դիրքը ի ցույց դնելու խորհրդանիշներ են: Այս անունները հիմնականում իրանական են, սակայն որոշ դեպքերում Ֆիրդուսին օգտագործել է դրանց

արաբական ձևերը ևս: Կենդանիների ու թռչունների քննված անուններն են. *āhū, asb, babr, pīl, mār, šayāl, yōz, palang, xarčang, gāv, dīvpāy, tāvus, ‘uqāb, āluh, lāšxur, dāl*: Քննված բուսանունները, որոնց առկայությունը պայմանավորված է դրանց խորհրդանշությամբ, դիցաաշխարհընկալումային պատկերացումներով, հետևյալն են. *angōr, arzan/arzūn, isfand, bih, bādōm, bēd, banafša, turanġ, ābnōs, za‘frān, zarēr, ĵou, k(g)abast*:

9. Ջամշիդի իշխանության տարիներին կատարվում է կարևորագույն իրադարձություններից մեկը՝ հին իրանական հասարակության դասային բաժանումը, որի եզրույթաբանությունը հետևյալն է. *ātōrniyān / āturōniyān* «հոգևորականները», *tīštāryān* «զինվորականները», *pasūyi/pasūhi* «հողագործներ ու անասնապահներ», *uhtūxošt* «արհեստագործներ»:

10. Երկրագործությանը վերաբերող բառամիավորները քանակապես ավելի քիչ են՝ *bīl, arra, dās, gurāz, kulang, māla*: Անասնապահությանը վերաբերող բառաշարքում գերակշռում են ձիու հետ կապված միավորները՝ *ĵunāy, zēn, kōha, pōlān, namadzēn, sipār/supār, yōy, zangōla, luġām (ligām)*:

11. «Շահնամե»-ում բառակազմության հիմնական եղանակները բարդությունն ու ածանցումն են, որոնք շարունակվում են նաև ժամանակակից պարսկերենում, ընդ որում՝ բարդության տեսակարար կշիռը խիստ մեծ է ածանցման համեմատությամբ: Էպոսի բառապաշարի համար բնորոշ են երկբաղադրիչ, հազվադեպ՝ եռաբաղադրիչ բարդությունները: Երկբաղադրիչ բարդությունների մեջ սովորաբար հիմքային արժեք ունի երկրորդ բաղադրիչը, եռաբաղադրիչ բարդությունների մեջ՝ երրորդը, այսինքն՝ որպես բարդության հիմք (լրացյալ) հանդես է գալիս վերջին միավորը:

12. Պարսկերենը, լինելով հարավարևմտյան լեզու, ներառում է բազմաթիվ պարթևական կամ հյուսիսարևմտյան, և արևելաիրանական՝ սողդական, ծագման բառամիավորներ: Ընդ որում, այս փոխառությունները, որոնք պարսկերենի բառապաշարի անբաժանելի մասն են և առաջացել են միջերթնիկ շփումների արդյունքում, պայմանավորված են նաև վերբարբառային լեզվի առաջացման ու գրականության ստեղծման գործընթացներով:

13. «Շահնամե» վկայել է պարսկերենի հիմնական արևելաիրանական բառաշերտը, որի մի մասը հետագայում դուրս է եկել ակտիվ բառապաշարից՝ մնալով միայն բառարանային, գրքային, աղբյուրային մակարդակներում: Ատենախոսությունում քննարկված արևելաիրանական ծագմամբ բառամիավորներն են. *āvāza, fayfūr, tāl o māl (šodan) sitēy, faž, rāy, čuyd, zēvar, āyāz, āyāzidan, butfōz, sangsār, rēž, žiyār, yāfa, āruyda, pasejīdan/pasečīdan, alfanjīdan*: Հյուսիսարևմտյան հնչյունական զարգացմամբ միավորները պատկառելի թիվ են կազմում և՛ էպոսի լեզվում, և՛ պարսկերենում ընդհանրապես: Դրանցից են՝ *āžir, sipenġ* և այլն:

14. «Շահնամե» վկայել է պարսկերենի հնավանդ ու բնիկ բառեր, որոնց մի մասը պահպանվել է միայն բարբառներում, մի մասը բնութագրվում է կիրառության սահմանափակությամբ, սակայն կարևորվում են լեզվի

մաքրման գործընթացներում՝ վերածվելով վստահելի աղբյուրի: Էպոսում վկայված հնավանդ բառերից են. *āb* «փայլ», *anbān* «պայուսակ», *girāz* «բահ, բրիչ», *kadēvar* «տանտեր», *kaš* «գիրկ, թևատակ» *rad* «խմաստուն» նաև՝ «քաջ», *paydāvsi* «նվեր», *gund* – «գունդ, հեծելագոր», *kārzār* – «մարտադաշտ», *mārgīr* «կախարդ», *rēš* «վերք», *gurd* – «քաջ (մարտիկ)», *xusrōu* «ազնվական», *suturg* «հսկա, ուժեղ», *rāy* «արքա» ևլն:

15. Իրանական էպոսում վկայված արաբաբանությունները, լինելով ողջ բառապաշարի 8.8%-ը, հիմնականում կիրառված են նախաբանում և վերջաբանում, որոնց նյութը, ըստ էության, չի առնչվում էպոսի հիմնական թեմային:

16. «Շահնամեն»՝ որպես նոր պարսկերեն առաջին վաղ հուշարձաններից մեկը, վկայել է նաև հայերենի իրանական բառաշերտը, որի նոր փոխառությունների մի հատված առանձնացվել է առանձին ենթազխում:

### **Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝**

1. Քարինզադե Նաղշինե, Ռ., «Ֆիրդուսիի “Շահնամե”-ում վկայված որոշ հնավանդ բառերի մասին», // *Orinetalia*, հտ. 14, Երևան, 2013, էջ 100-109:
2. Քարինզադե Նաղշինե, Ռ., «Բայական ու բայական անվանական կառույցերի գործածությունը Ֆիրդուսիի «Շահնամե»-ում», // *Orinetalia*, հտ. 15, Երևան, 2013, էջ 67-87 /պրսկ./:
3. Քարինզադե Նաղշինե, Ռ., «Ածականի և գոյականի բառակազմական մանրակադապարները «Շահնամե»-ի բառապաշարում» // *Orinetalia*, հտ. 16, Երևան, 2015, էջ 13-19:
4. Roghayeh Karimzadeh Naghshineh, “Alteration of verb semantics in Epic of Books (Shahnameh) by Ferdowsi”, // *International Journal of Review in Life Sciences (IJRLS)*, vol. 5, issue 2, 2015, pp. 1460 -1463.
5. Roghayeh Karimzadeh Naghshineh, “Barresi-ye čand vāže dar Šāhnāme-ye Ferdowsi”, *Majmu'e-ye maqālāt-e hamāyeš-e beyn-ol-melali Jestārḥā-ye adabi, zabān o erṭebāt-e farhangi*, Tehran, 2015, pp. 26-36 .
6. Roghayeh Karimzadeh Naghshineh, “Etymology of some Plant Names in Persian Language Based on Ferdowsi Shahnameh”, *Hamāyeš-e beyn-ol-melali šarqšenāsi, tārix-e adabiyat fārsi*, N 10, 2016, pp. 1-10 // *adabiat.farsi.com*
7. Roghayeh Karimzadeh Naghshineh, “Sāxtāršenāsi abzār-e kešāvarzi va dāmparvari dar Šāhnāme”, *Majmu'e-ye maqālāt-e dovomin hamāyeš-e beyn-ol-melali šarqšenāsi va motāle'āt-e irāni*”, Tehran, 2017, pp. 16-24.
8. Ռոդայե Քարինզադե Նաղշինե, «Հասարակության դասային բաժանման անվանումները «Շահնամե»-ում» // *Կանթեղ*, N2, Երևան, 2018, էջ 79-83:
9. Ռոդայե Քարինզադե Նաղշինե, «Ձիապահության իմաստային դաշտին վերաբերող բառամիավորներ «Շահնամե»-ում» // *Կանթեղ*, N2, Երևան, 2018, էջ 84-89:

## **РОГАЕ КАРИМЗАДЕ НАГШИНЕ** **ИССЛЕДОВАНИЕ ЛЕКСИКИ “ШАХНАМЕ”**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 «Общее и сравнительное языкознание»

Защита состоится 18 июня 2018г. в 13<sup>00</sup> часов, на заседании специализированного совета ВАК по лингвистике 019, действующего в Институте языка имени Р.

Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

### **РЕЗЮМЕ**

Самая длинная эпическая поэма “Шахнаме” Абулькасима Фирдоуси, написанная на классическом или придворном (язык дари) персидском (IX-XV), является важным первоисточником для изучения персидского языка. Исследование лексики эпоса с точки зрения исторического развития, семантики и словообразования выявляет первоначальное состояние и ранний период новоперсидского языка, слои лексики не персидского, а конкретно восточного, северо-западного, арабского происхождения.

Данная работа – попытка продемонстрировать вовлеченность исконно персидской лексики в этой общеиранской поэме, выявить словарные единицы, не вошедшие в словарный запас современного персидского языка, классифицировать не-персидские формы с диалектной точки зрения, которые, вполне возможно, утвердились в современном персидском языке благодаря эпосу.

В “Предисловии” представлены общие наблюдения о времени составления иранского эпоса и о его авторе - Фирдоуси. Исследуется проблема первоисточника, где анализируются вопросы об устной и письменной теории, дается подробный обзор состояния языка в период написания эпоса, также приводятся и исследуются проблемы связанные с формированием нового персидского языка и с его вовлеченностью в Шахнаме. История изучения Шахнаме достаточно многообразная. Эпос подвергался анализу с исторической, этнографической, культурологической, религиоведческой, мифологической точек зрения, но лексика и язык не были объектом детального лингвистического исследования. В рамках теорий исследования представляются некоторые работы по изучению языка Шахнаме, в частности, демонстрируется серия армянских переводов.

В первой главе диссертации, после общих наблюдений, приведена исконно персидская лексика засвидетельствованная в эпосе. Автохтонный словарный слой, представленный в данном труде, включает слова, которые обозначают семейные, кровно-родственные связи, относятся к животному и растительному миру, связаны с божественными и сверхъестественными образами, с земледелием и скотоводством, именуют разные социальные расслоение. Последний подзаголовок этой части посвящена некоторым словообразовательным вопросам, где выявляются новые факты в отношении



образования прилагательных и существительных и семантики, которые частично перенесли и в современный персидский.

Персидский язык – один из южно-восточных иранских языков - включает не только многочисленные парфянские и северо-западные диалектные элементы, но и имеет множество заимствований из восточно-иранских языков, в первую очередь из согдийского.

Во второй главе рассматриваются согдийские, северо-западные элементы, засвидетельствованные в эпосе. Более того, представленные заимствования неотъемлемая часть персидского языка, которые сформировались не только в следствии межэтнического контакта. Слой контактных заимствований, формирующийся в результате тесного взаимоотношения разных народов, свойственен всем языкам (как в персидском – арабские, тюрко-монгольские, индийские заимствования). Существование восточно-иранских, а также северо-западных элементов в персидском языке связано не только с тесными контактами с согдийцами или парфянами, но и с наличием наддиалектного языка и с созданием литературы. Засвидетельствованы 706 слов арабского происхождения. Встречаются также 89 топонимов и имен собственных, 28 арабизированных иранских слов, 8 слов на санскрите, 30 заимствований из греческого и латинского языков со своими арабскими и персидскими вариантами. В данной главе в отдельном подзаголовке приведен список архаичных слов, часть которых не употребляется в лексике современного персидского языка.

Третья глава посвящена иранским заимствованиям в армяноском, которые засвидетельствованы в эпосе.

В “Послесловии” суммируются основные результаты диссертационной работы (15 пунктов). В конце работы представлены списки аббревиатур и использованной разноязычной литературы.

**ROGHAYEH KARIMZADEH NAGHSHEH**  
**STUDY ON SHANAMEH'S LEXICON**

*Dissertation for the PhD degree in Philological Sciences,  
Speciality 10.02.02 "General and Comparative Linguistics",  
The defence will take place on June 18, 2018 at 13<sup>00</sup> at the address 0015 Yerevan,  
Grigor Lusavorich St. 15 at the special session of the Academic Council (N 019 on  
Linguistics) of the Hrachia Acharian Institute of Linguistics.*

**SUMMARY**

Abu l'Qasim Ferdowsi's "Shanameh" is the longest epic poem written in Classical (Dari) Persian (IX-XV) and has a primary source significance for the study of Persian. The analysis of the language of the epic from the historical development, semantic and word-forming viewpoints determinates the language situation at the origin and during the earliest period of New Persian, and reveals also non-Persian, particularly, eastern, north-western and Arabic layers of the lexicon,.

The presented dissertation is the first attempt to reveal the presence of indigenous lexicon of New Persian in this Pan-Iranian epic poem, to present those separate items that are not included in the active vocabulary of the contemporary Persian language, to classify the non-Persian forms from the dialectal point of view that have, probably, been penetrated into contemporary Persian through the epic.

The first part of the dissertation - "Introduction", contains general observations on the period of composition of the Iranian epic and data concerning its author Ferdowsi. The dispute concerning the primary source issue: both written and oral theories, has been under study. A detailed overview has been made to clarify the language situation in the period of writing the epic and several issues concerning the formation of New Persian and its involvement in Shanameh have been analyzed and adduced. The history of Shanameh study is rather diverse. The epic has been analyzed from historical, ethnographic, cultural, theological, mythological point of views, but lexicon and language have never been subjects of a detailed linguistic research. In the frame of study review works on Shanameh's language are presented, particularly, series of Armenian translations have been demonstrated.

In the first chapter of the dissertation after a general outline the native Persian lexicon attested in the epic is studied. The autochthonous vocabulary layer, presented in the research, comprises words denoting family kinship relations, relating to flora and fauna, associated with divine and supernatural figures, with agriculture and live farming, also designating various social stratifications. The last subtitle of this chapter is devoted to some word-formative issues where new facts come to light with regard to

construction of adjectives and nouns and semantics that are partially shifted to modern Persian.

The Persian language is classified as one of the south-eastern Iranian languages and besides numerous Parthian and north-western dialectal elements includes many borrowings from Eastern Iranian languages, primarily from Sogdian.

The second chapter deals with Sogdian, north-western elements attested in the epic. Besides, the presented borrowings are an inalienable part of the Persian language, which were formed not only as a consequence of inter-ethnic contact.

The contact borrowings' layer, formed in consequence of close interrelation between different peoples, is common for all languages (as in Persian - Arabic, Turkic-Mongolian, Indian borrowings). The existence of eastern Iranian and north-western elements in the Persian language relates not only to close interactions with Parthians or Sogdians, but also with the presence of supra-dialectal language and literature. There are 706 words of Arabic origin, also 89 toponyms and proper nouns, 28 Iranian Arabized words, 8 words in Sanskrit, 30 borrowings from Greek and Latin languages with their Arab and Persian versions. In this chapter, a separate subtitle contains a list of archaic words, some of which are out of usage in modern Persian.

The third chapter is about the Iranian borrowings in Armenian which are attested in Shahname.

In the "Afterword" the author summarizes the results of the work obtained during a thorough study (including 15 clauses). The final section of the thesis includes lists of abbreviations and multilingual literature.